

# Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ

Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր  
ՎՋՄԲ Վարկ 8229-AM

ՎՋՄԲ Վարկ 8523-AM

2023թ. ապրիլի 27-ի դրությամբ և 2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի  
27-ն ընկած ժամանակաշրջանի համար



# Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին համախմբված հաշվետվություն	8
Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին համախմբված հաշվետվություն	9
ԾԱՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ	10
Հատուկ հաշվի հաշվետվություն	11
Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

## Անկախ աուդիտորի եզրակացություն

### Գրանթ Թորնթոն ՓԲԸ

Երևան Պլազա բիզնես կենտրոն  
ՀՀ, ք. Երևան 0015  
Գրիգոր Լուսավորչի 9  
Հ. + 374 10 50 09 64/61

### Grant Thornton CJSC

Yerevan Plaza Business Center  
9 Grigor Lusavorich Street,  
Yerevan 0015, Republic of Armenia  
T + 374 10 50 09 64/61

Հայաստանի Հանրապետության կառավարությանը,

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի շրջանակներում ֆինանսավորվող Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի (Ծրագիր) կից ներկայացված Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. ապրիլի 27-ի դրությամբ և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունները, Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին համախմբված հաշվետվությունները, ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին համախմբված հաշվետվությունները, հատուկ հաշվի հաշվետվությունները՝ 2023թ. ապրիլի 27-ի դրությամբ և 2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջանի համար և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար, ինչպես նաև ծախսերի մասին հաշվետվությունները (ՏՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ), որոնք ներկայացվել են Համաշխարհային Բանկ՝ 2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջանի համար՝ 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի շրջանակներում համալրումները հիմնավորելու նպատակով, հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով, կից Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2023թ. ապրիլի 27-ի դրությամբ և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի (8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրեր) համախմբված ֆինանսական վիճակի և 2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջանի և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ստացված և օգտագործված ֆոնդերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Համաշխարհային Բանկի ուղեցույցների, 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի համապատասխան հոդվածների:

Ի հավելումն, մեր կարծիքով, ներկայացված ՏՄՀ-ները, ինչպես նաև դրանց պատրաստման համար ներդրված ներքին վերահսկողությունը և ընթացակարգերը կարող են վստահելի հիմք հանդիսանալ 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի շրջանակներում համալրումների համար:

### *Կարծիքի հիմք*

Մենք աուդիտին անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «*Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի*» (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### *Հանգամանքների շեշտադրում*

- Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որը վերաբերում է հաշվապահական հաշվառման հիմունքներին: Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ղեկավարությանը՝ Համաշխարհային Բանկի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:
- Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 3-ի վրա, որտեղ նշված է, որ Ծրագրի փակման ամսաթիվը 2022թ. դեկտեմբերի 31-ն է: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

### *Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է սույն Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Համաշխարհային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի համապատասխան հոդվածների: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ծրագրի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

*Առողիտորի պատասխանատվությունը Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունների առողիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող առողիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված առողիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան առողիտի մաս, առողիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք առողիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում առողիտորական սպացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում առողիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան առողիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Գնահատում ենք Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան  
Տնօրեն

28 ապրիլի 2023թ.



Էմիլ Վասիլյան, FCCA

Առաջադրանքի պատասխանատու



# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

ԱՄՆ դոլար		2023թ. ապրիլի 27-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
<i>Ակտիվներ</i>			
Ծրագրի կուտակային ծախսեր (վարկային համաձայնագիր թիվ 8229-AM և վարկային համաձայնագիր թիվ 8523-AM)		104,659,414	104,659,414
Մնացորդներ բանկերում	4	110,124	131,700
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>104,769,538</b>	<b>104,791,114</b>
<i>Ֆոնդեր և պարտավորություններ</i>			
Ծրագրի կուտակային ֆինանսավորում (վարկային համաձայնագիր թիվ 8229-AM)		43,751,780	43,751,780
Ծրագրի կուտակային ֆինանսավորում (վարկային համաձայնագիր թիվ 8523-AM)		40,000,000	40,000,000
Կառավարության համաֆինանսավորում (վարկային համաձայնագիր թիվ 8229-AM)		10,852,674	10,874,188
Կառավարության համաֆինանսավորում (վարկային համաձայնագիր թիվ 8523-AM)		9,950,446	9,950,446
Այլ		69,225	69,225
Փոխարժեքային տարբերություն		145,413	145,475
<b>Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ</b>		<b>104,769,538</b>	<b>104,791,114</b>

Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2023թ. ապրիլի 28-ին՝


Գոռ Ավետիսյան

Գործադիր տնօրեն



Մարինա Սաֆարյան

Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման բաժնի պետ/  
Գլխավոր հաշվապահ



Այս հաշվետվությունը պատրաստվել է ընդհանուր ժողովրդական համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 22-րդ հոկտեմբերի 2023-ի տարեկան հաշվառման փուլի ժամկետային հետ մեկտեղ:



«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ  
Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր  
ՎՋՄՔ Վարկ 8229-AM  
ՎՋՄՔ Վարկ 8523-AM

# Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին համախմբված հաշվետվություն

ԱՄՆ դոլար	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն	
	2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ի	2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջան	2023թ. ապրիլի 27-ի դրությամբ	2023թ. ապրիլի 27-ի դրությամբ	2023թ. ապրիլի 27-ի դրությամբ	Ծրագիր
	ավարտված տարի					
<b>Ֆոնդերի աղբյուրներ</b>						
Համաշխարհային բանկի ֆինանսավորում (տե՛ս ծանոթ. 5)						
ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM	331,111	-	43,751,780			
ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM	-	-	40,000,000			
Կառավարության համաֆինանսավորում (տե՛ս ծանոթ. 6)						
ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM	34,155	(21,514)	10,852,674			
ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM	-	-	9,950,446			
Այլ	-	-	69,225			
<b>Ընդամենը</b>	<b>365,266</b>	<b>(21,514)</b>	<b>104,624,125</b>			
<b>Փոխարժեքային տարբերությունից օգուտ</b>						
	20,102	(62)	145,413			
<b>Նվազեցնել. ֆինանսավորման օգտագործում</b>						
ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM						
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր (տե՛ս ծանոթ. 7)						
	259,749	-	54,465,803	54,524,499	(58,696)	56,109,375
Սկզբնավճար	-	-	112,500	112,500	-	112,500
<b>Ընդամենը ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM</b>	<b>259,749</b>	<b>-</b>	<b>54,578,303</b>	<b>54,636,999</b>	<b>(58,696)</b>	<b>56,221,875</b>
ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM						
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր և վերապատրաստումներ (բացառությամբ Ծրագրի Մաս 1(ե)) և 2 (բ) (ա)-ի (տե՛ս ծանոթ. 7)						
	-	-	49,981,111	49,900,000	81,111	49,900,000
Սկզբնավճար	-	-	100,000	100,000	-	100,000
<b>Ընդամենը ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>50,081,111</b>	<b>50,000,000</b>	<b>81,111</b>	<b>50,000,000</b>
<b>Ընդամենը</b>	<b>259,749</b>	<b>-</b>	<b>104,659,414</b>	<b>104,636,999</b>	<b>22,415</b>	<b>106,221,875</b>
<b>Շրջանառու կապիտալի գուտ աճ/(նվազում) (տե՛ս ծանոթ. 8)</b>	<b>125,619</b>	<b>(21,576)</b>	<b>110,124</b>			

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ  
Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր  
ՎՋՄԲ վարկ 8229-AM  
ՎՋՄԲ վարկ 8523-AM

Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվություններ  
2023թ. ապրիլի 27-ի դրությամբ և 2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջանի համար



# Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին համախմբված հաշվետվություն

ԱՄՆ դոլար	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն	
	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջան	2023թ. ապրիլի 27-ի դրությամբ	2023թ. ապրիլի 27-ի դրությամբ	2023թ. ապրիլի 27-ի դրությամբ	Ծրագիր
<b>ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM</b>						
Մաս 1: Կենսական նշանակության ճանապարհների բարելավում	89,609	-	52,025,052	52,076,135	(51,083)	52,390,000
Ճանապարհի բարելավման աշխատանքներ	-	-	42,106,838	42,149,135	(42,297)	41,510,000
Հիմնանորոգման և պահպանության փորձնական պայմանագիր	-	-	5,600,786	5,600,000	786	6,760,000
Միկրոձեռնարկությունների միջոցով ընտրված հատվածների ընթացիկ պահպանություն՝ փորձնական հիմքով	-	-	-	-	-	170,000
Նախագծային ուսումնասիրություն և տեխնիկական հսկողություն	89,609	-	4,101,186	4,102,000	(814)	3,700,000
Ճանապարհային երթևեկության անվտանգության բարձացում և վտանգավոր հատվածների բարելավում	-	-	216,242	225,000	(8,758)	250,000
Մաս 2: Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ հզորացում	170,140	-	2,440,751	2,448,364	(7,613)	3,719,375
Աջակցություն Ծրագրի համակարգմանն ու իրականացմանը, ներառյալ առողիտ	-	-	937,817	940,000	(2,183)	1,109,375
Ակտիվների կառավարման ճանապարհային համակարգ և հետազոտման սարքավորումների ձեռքբերում	-	-	427,197	430,000	(2,803)	500,000
Ճանապարհային երթևեկության անվտանգության տեխնիկական աջակցություն	-	-	-	-	-	250,000
Տեխնիկական աջակցություն	170,140	-	1,075,737	1,078,364	(2,627)	1,860,000
Ընդամենը ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM	259,749	-	54,465,803	54,524,499	(58,696)	56,109,375
<b>ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM</b>						
Մաս 1: Կենսական նշանակության ճանապարհների բարելավում	-	-	48,224,271	48,130,000	94,271	46,710,000
Ճանապարհի բարելավման աշխատանքներ	-	-	42,491,919	42,395,000	96,919	37,420,000
Հիմնանորոգման և պահպանության փորձնական պայմանագիր	-	-	-	-	-	5,090,000
Նախագծային ուսումնասիրություն և տեխնիկական հսկողություն	-	-	5,732,352	5,735,000	(2,648)	4,200,000
Մաս 2: Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ հզորացում	-	-	1,756,840	1,770,000	(13,160)	3,190,000
Աջակցություն Ծրագրի համակարգմանն ու իրականացմանը, ներառյալ առողիտ	-	-	1,025,855	1,030,000	(4,145)	1,040,000
Ակտիվների կառավարման ճանապարհային համակարգ և հետազոտման սարքավորումների ձեռքբերում	-	-	692,315	700,000	(7,685)	440,000
Ճանապարհային երթևեկության անվտանգության տեխնիկական աջակցություն	-	-	-	-	-	230,000
Տեխնիկական աջակցություն	-	-	38,670	40,000	(1,330)	1,480,000
Ընդամենը ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM	-	-	49,981,111	49,900,000	81,111	49,900,000
Ընդամենը	259,749	-	104,446,914	104,424,499	22,415	106,009,375

Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին համախմբված հաշվետվությունը 2023թ. ապրիլի 27-ի դրությամբ չի ներառում 212,500 ԱՄՆ դոլար սկզբնավճարները:

Ծրագրերի դադարեցման պատճառով բյուջեն վերանայվել է:

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Ճանապարհային ղեկարտամենտ» հիմնադրամ  
Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր  
ՎՋՄԲ վարկ 8229-AM  
ՎՋՄԲ վարկ 8523-AM

# ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ

2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջանի համար  
ԱՄՆ դոլար  
ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM

	Հոդված
Դիմումի համար	Ծրագրի ներքո ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ և գործառնական ծախսեր
36-DA	64,313
37-DA	73,128
39-DA	137,115
Ընդամենը	274,556

ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM

	Հոդված
Դիմումի համար	Ծրագրի ներքո ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ և գործառնական ծախսեր
38-DA	1,699,489
Ընդամենը	1,699,489

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Հատուկ հաշվի հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար  
 ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM  
 ԱՄՆ դոլար

Մնացորդը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ		4,573
Ավելացնել.		
Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն	-	
Վարկի համալրում տարվա ընթացքում	331,111	
	<u>331,111</u>	<u>331,111</u>
Նվազեցնել.		
Հատուկ հաշվից փոխհատուցում Համաշխարհային Բանկին տարվա ընթացքում		-
Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)		<u>335,684</u>
Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		110,124
Ավելացնել.		
Տարվա ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար	225,560	
Ծառայության վճարներ (եթե առկա է)	-	
	<u>225,560</u>	<u>225,560</u>
Նվազեցնել.		
Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին)		-
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)		<u>335,684</u>
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)		-

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործունեություն

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ (Հիմնադրամ) իրականացնում է Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիրը (Ծրագիր): Հայաստանի Հանրապետության 2021թ. օգոստոսի 6-ին կնքված N 1298-Ա որոշման համաձայն «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ը վերակազմավորվել է Հիմնադրամի:

Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիրը ֆինանսավորվել է 2013թ. փետրվարի 11-ին կնքված թիվ 8229-AM վարկային համաձայնագրով՝ ստորագրված Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև: Ծրագրի նպատակն է ընտրված կենսական նշանակության ճանապարհները բարելավելու միջոցով բարելավել շուկաների և ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար և հզորացնել Հիմնադրամի կարողությունը՝ կառավարելու համար կենսական նշանակության ճանապարհային ցանցը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝

Մաս 1: Կենսական նշանակության ճանապարհների բարելավում

- Կենսական նշանակության ճանապարհային ցանցի մոտ 147 կմ երկարությամբ ընտրված ճանապարհների բարելավման աշխատանքների իրականացում:
- Հիմնանորոգման և պահպանության երկու փորձնական պայմանագրերի պայմաններով մոտ 23 կմ երկարությամբ՝ ընտրված կենսական նշանակության ճանապարհների հիմնանորոգում և ընթացիկ պահպանություն:
- Ծրագրի շրջանակում հիմնանորոգման աշխատանքների համար մանրամասն նախագծային ուսումնասիրություն, տեխնիկական հսկողություն և անկախ տեխնիկական աուդիտներ:
- Ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ դրանց վտանգավոր հատվածների բարելավում:

Մաս 2: Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ հզորացում

- Աջակցություն Ծրագրի համակարգմանն ու իրականացմանը Ծրագրի կառավարման ու մոնիտորինգի համար պահանջվող գործառնական ծախսերի (այդ թվում՝ ֆինանսական աուդիտների) ֆինանսավորման միջոցով:
- Ճանապարհային երթևեկության անվտանգության ծրագրի իրականացում, ի թիվս այլ հարցերի՝ ա) ճանապարհների վտանգավոր հատվածների բարելավման աշխատանքների համար մանրամասն նախագծերի պատրաստում, բ) վերապատրաստման ծրագրեր ՀԱՃՏ-ի անձնակազմի համար, գ) ճանապարհային անվտանգության կրթական ծրագրեր Ծրագրում ընդգրկված գյուղերի դպրոցներում, և դ) կենսական նշանակության ճանապարհային ցանցի հետ կապված՝ ճանապարհային երթևեկության անվտանգության քարտզարշավների իրականացում:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ  
Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր  
ՎՋՄԲ Վարկ 8229-AM  
ՎՋՄԲ Վարկ 8523-AM

Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվություններ  
2023թ. ապրիլի 27-ի դրությամբ և 2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջանի համար 12

- Տեխնիկական աջակցության տրամադրում, ի թիվս այլ հարցերի՝ ա) կատարողականի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ ճանապարհների հիմնանորոգման ու պահպանության համար իրագործելիության ուսումնասիրության իրականացման, այդ թվում՝ առնվազն մեկ ճանապարհային հատվածի նախանշման հարցում, բ) Ծրագրի հետ կապված սոցիալական մոնիտորինգի և գնահատման, ինչպես նաև ճանապարհային ոլորտի ֆինանսական կայունության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման հարցում, գ) ՏԿԵՆ անձնակազմի և տեղական կապալառուների վերապատրաստման հարցում՝ Ծրագրի նոր գաղափարների, այդ թվում՝ կատարողականի վրա հիմնված բազմամյա պայմանագրերի նախագծման ու իրականացման, արդյունավետ նախագծային ստանդարտների և ՏԿԵՆ ու ՀԱՏՏ-ի անձնակազմի համար պլանավորման ու պայմանագրերի մոնիտորինգի վերաբերյալ, և դ) ճանապարհային ոլորտում ապագա հնարավոր ներդրումների նախապատրաստման համար պահանջվող տեխնիկական ուսումնասիրությունների իրականացման և մանրամասն նախագծերի իրականացում մշակման հարցում:

Համաձայն 2013թ. փետրվարի 11-ին կնքված 8229-AM վարկային համաձայնագրի՝ Ծրագիրն իրականացվում է հետևյալ հոդվածներով.

Հոդված	Ծախսերի ֆինանսավորում տոկոսով (ներառյալ հարկերը)	Հատկացված վարկային միջոցներ (ԱՄՆ դոլարով)
Ծրագրի ներքո ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ և գործառնական ծախսեր	80 %	44,887,500
Սկզբնավճար		112,500
Ընդամենը		45,000,000

Հայաստանի Հանրապետության կողմից վճարվելիք սկզբնավճարը կազմում է վարկային գումարի 0.25%-ը:

Ծրագրի գումարները բաշխված են հետևյալ բաղադրիչների միջև.

Բաղադրիչներ	Բանկի ֆինանսավորում (ԱՄՆ դոլարով) (ներառյալ հարկերը)	Կառավարության ֆինանսավորում (ԱՄՆ դոլարով)	Ընդհանուր արժեք (ԱՄՆ դոլարով)
Կենսական նշանակության ճանապարհների բարելավում	41,912,000	10,478,000	52,390,000
Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ հզորացում	2,975,500	743,875	3,719,375
Ընդամենը Ծրագրի ծախսեր	44,887,500	11,221,875	56,109,375
Սկզբնավճար	112,500	-	112,500
Ընդամենը	45,000,000	11,221,875	56,221,875

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ  
Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր  
ՎՋԼԲ Վարկ 8229-AM  
ՎՋԼԲ Վարկ 8523-AM

2015թ. օգոստոսի 26-ին ուժի մեջ է մտել Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև կնքված նոր Վարկային համաձայնագիր (Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում) (Վարկ թիվ 8523-AM)՝ Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի համար տրամադրելով 40,000,000 ԱՄՆ դոլար լրացուցիչ ֆինանսավորում:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝

Մաս 1: Կենսական նշանակության ճանապարհների բարելավում

- Կենսական նշանակության ճանապարհային ցանցի մոտ 360 կմ երկարությամբ ընտրված ճանապարհների բարելավման աշխատանքների իրականացում:
- Պիլոտային սկզբունքով (ա) հիմնանորոգման և ընթացիկ պահպանման աշխատանքների իրականացում կենսական նշանակության ճանապարհային ցանցի՝ մոտ 23.4 կմ երկարությամբ ընտրված հատվածներում՝ հիմնանորոգման և պահպանման պայմանագրի պայմանների համաձայն և (բ) հիմնանորոգման և պահպանման երկու պայմանագրերի շրջանակներում մոտ 23 կմ երկարությամբ ընտրված կենսական նշանակության ճանապարհների հիմնանորոգում և ընթացիկ պահպանություն:
- Ծրագրի շրջանակում հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով մանրամասն նախագծային ուսումնասիրության, տեխնիկական հսկողության աշխատանքների և անկախ տեխնիկական աուդիտի իրականացում:
- Ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ (ա) ճանապարհի՝ վտանգավորության բարձր աստիճան ունեցող հատվածների բարելավում, (բ) Ծրագրի շրջանակներում հիմնանորոգված բոլոր ճանապարհների «Ապահով գյուղերի» իրականացման հետ կապված աշխատանքներ և (գ) ճանապարհային նշանների ձեռքբերում և տեղադրում:
- Թույլատրելի արտակարգ իրավիճակի, ինչպես նաև համաձայնագրում սահմանված պահանջները բավարարելու դեպքում աջակցության տրամադրում՝ թույլատրելի արտակարգ իրավիճակին արձագանքելու նպատակով՝ Վարկառուի տարածքում ընտրված ճանապարհային հատվածում նախագծման և ներդրումների իրականացման միջոցով:

Մաս 2: Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ հզորացում

- Ծրագրի համակարգման ու իրականացման նպատակով աջակցության տրամադրում ա) Ծրագրի կառավարման ու մոնիթորինգի համար պահանջվող գործառնական ծախսերի ֆինանսավորման միջոցով, ինչպես նաև բ) Ծրագրի ֆինանսական աուդիտի իրականացման միջոցով:
- ա) Ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի տեղեկատվական բազայի ձեռքբերում, այդ թվում՝ տեղադրում և ՀԱՃՏ-ի անձնակազմի՝ նշված տեղեկատվական բազայի օգտագործման իմաստով վերապատրաստում, բ) ճանապարհային պայմանների և երթևեկության ուսումնասիրման նպատակով ճանապարհների հետազոտման սարքավորումների ձեռքբերում և դ) կենսական նշանակության ճանապարհային ցանցի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում՝ ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի համար:
- Ճանապարհային երթևեկության անվտանգության ծրագրի իրականացում, ի թիվս այլ հարցերի ա) ճանապարհների վտանգավոր հատվածների բարելավման աշխատանքների համար մանրամասն նախագծերի մշակում,

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ  
Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր  
ՎԶՄԲ Վարկ 8229-AM  
ՎԶՄԲ Վարկ 8523-AM

Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվություններ  
2023թ. ապրիլի 27-ի դրությամբ և 2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջանի համար 14

բ) վերապատրաստման ծրագրեր ՀԱՃՏ-ի անձնակազմի համար, գ) ճանապարհային անվտանգության կրթական ծրագրեր Ծրագրում ընդգրկված ապահով գյուղերի դպրոցներում, և դ) կենսական նշանակության ճանապարհային ցանցի հետ կապված ճանապարհային երթևեկության անվտանգության քարոզարշավների իրականացում, ե) ճանապարհային երթևեկության անվտանգության գործողությունների ծրագրի մշակում և գ) Ծրագրի Մաս 2 (գ) (ե) կետի ներքո մշակված գործողությունների ծրագրի ընտրված միջոցառումների իրականացում:

- Տեխնիկական աջակցության տրամադրում, ի թիվս այլ հարցերի՝ ա) կատարողականի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ ճանապարհների հիմնանորոգման ու պահպանության համար տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրության իրականացման, այդ թվում՝ առնվազն մեկ ճանապարհային հատվածի նախանշման հարցում, բ) Ծրագրի հետ կապված սոցիալական մոնիթորինգի և գնահատման, ինչպես նաև ճանապարհային ոլորտի ֆինանսական կայունության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման հարցում, գ) ՏԿԵՆ անձնակազմի և տեղական կապալառուների վերապատրաստման հարցում՝ Ծրագրի նոր գաղափարների, այդ թվում՝ կատարողականի վրա հիմնված բազմամյա պայմանագրերի նախագծման ու իրականացման, արդյունավետ նախագծային ստանդարտների և ՏԿԵՆ ու ՀԱՃՏ-ի անձնակազմի համար պլանավորման ու պայմանագրերի մոնիթորինգի վերաբերյալ, դ) ճանապարհային ոլորտում ապագա հնարավոր ներդրումների նախապատրաստման համար պահանջվող տեխնիկական ուսումնասիրությունների իրականացման և մանրամասն նախագծերի իրականացում մշակման հարցում, ե) կենսական նշանակության ճանապարհային ցանցի համար ռազմավարական զարգացման պլանի մշակում և գ) ճանապարհային ոլորտի համար աղետների ռիսկի իմաստով պատրաստվածության խթանում:

Համաձայն 2015թ. օգոստոսի 26-ին կնքված 8523-AM վարկային համաձայնագրի՝ Ծրագիրն իրականացվում է հետևյալ հոդվածներով.

Հոդված	Ծախսերի ֆինանսավորում տոկոսով (ներառյալ հարկերը)	Հատկացված վարկային միջոցներ (ԱՄՆ դոլարով)
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսեր և վերապատրաստումներ (բացառությամբ Ծրագրի Մաս 1(ե)) և 2 (բ) (ա)-ի)	80 %	39,900,000
Սկզբնավճար		100,000
Ընդամենը		40,000,000

Հիմնադրամի գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության շենք 3:

Ծրագրում ներգրավված աշխատակիցների միջին թվաքանակը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կազմել է 17 մարդ (2021թ.՝ 15 մարդ):



## 2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### 2.1 Պատրաստման հիմքերը

Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով, Համաշխարհային Բանկի ուղեցույցի, ինչպես նաև 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի համապատասխան պահանջների համաձայն: Կարևոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունները բացահայտված են ստորև:

Սույն Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի շրջանակներում պատրաստված Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները:

### 2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ): Սույն Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի նախորդ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հայտարարված հաշվարկային փոխարժեքով: Համաշխարհային Բանկի միջոցներից Ծրագրի գործընկերներին կատարված ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով արտահայտված ուղղակի վճարումները գրանցվում են client connection (<https://clientconnection.worldbank.org>) համակարգի փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցները, կանխավճարները և կրեդիտորական պարտքերը վերահաշվարկվում են՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը. 2023թ. ապրիլի 27-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 386.43 ՀՀ դրամ, իսկ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 393.57 ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 480.14 ՀՀ դրամ): Փոխարժեքային տարբերությունը ճանաչվում է ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում և փոխարժեքային տարբերության կուտակված գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Փոխարժեքային տարբերություն» հոդվածում:

### 2.3 Ծրագրի ֆինանսավորում

8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը գրանցվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես «Ծրագրի կուտակային ֆինանսավորում» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ: Ի լրումն, տարվա ընթացքում ստացված ֆոնդերը բացահայտվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին համախմբված հաշվետվությունում:

#### *Համաշխարհային Բանկի ֆինանսավորում*

8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերի համար ընդունելի ծախսերի ֆինանսավորման նպատակով Համաշխարհային Բանկը վճարումներ է կատարում՝ օգտագործելով հետևյալ վճարման մեթոդներից մեկը կամ մի քանիսը.

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ  
Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր  
ՎՋՄԲ Վարկ 8229-AM  
ՎՋՄԲ Վարկ 8523-AM

ա) Հատուցում

Բանկը կարող է հատուցել փոխառուին՝ նրա սեփական միջոցներով կատարված ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

բ) Կանխավճար

Բանկը կարող է առհաշիվ վարկային վճարում կատարել փոխառուի հատուկ հաշվին՝ ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով և դրանց կատարմանը գույքընթաց, որոնց համար հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն ավելի ուշ:

գ) Ուղղակի վճարումներ

Բանկը փոխառուի հայցով կարող է վճարումներ կատարել ուղղակիորեն երրորդ անձին՝ ընդունելի ծախսերի դիմաց:

դ) Հատուկ պարտավորագրեր

Բանկը կարող է վճարումներ կատարել երրորդ անձին հատուկ պարտավորագրի շրջանակներում ընդունելի ծախսերի փոխհատուցման համար փոխառուի գրավոր հաստատված հայցով, որը համաձայնեցված է փոխառուի և Բանկի կողմից:

*Կառավարության համաֆինանսավորում*

Կառավարության համաֆինանսավորման գումարները ճանաչվում են որպես ֆինանսավորում և ներառվում են Ծրագրի համախմբված ֆինանսական հաշվետվություններում միայն այն ժամանակ, երբ դրանք փոխանցվել են Ծրագրի ընթացիկ հաշվին («Կառավարության համաֆինանսավորման հաշիվ»), որը նույնպես բացվել է Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարանում:

**2.4 Ծրագրի ծախսեր**

Ծրագրի ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով: Ծրագրի կուտակային ծախսերը բացահայտվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Ի հավելումն՝ ծախսերը ներառվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին և ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին համախմբված հաշվետվություններում: Ի լրումն, ծանոթագրություն 7-ում ներկայացված է ծախսերի բաշխումն ըստ հոդվածների:

**2.5 Կանխավճարներ**

Կանխավճարները, որոնք ներառում են դեռևս չստացված ծառայությունների և աշխատանքների համար վճարված գումարները, չափվում են անվանական արժեքով:

**2.6 Կրեդիտորական պարտքեր**

Կրեդիտորական պարտքերը ներառում են վճարվելիք գումարները, որոնք չափվում են անվանական արժեքով:

**3 Ծրագրի փակման ամսաթիվ**

Համաձայն թիվ 8229-AM վարկային համաձայնագրի և թիվ 8523-AM վարկային համաձայնագրի՝ Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2022թ. դեկտեմբերի 31-ը:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ  
Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր  
ՎՋԱԲ Վարկ 8229-AM  
ՎՋԱԲ Վարկ 8523-AM

## 4 Մնացորդներ բանկերում

ԱՄՆ դոլար	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. ապրիլի 27-ի դրությամբ
Հատուկ հաշիվ (վարկային համաձայնագիր թիվ 8229-AM)*	110,124	110,124
Կառավարության համաֆինանսավորման հաշիվ (վարկային համաձայնագիր թիվ 8229-AM)	-	21,576
	<u>110,124</u>	<u>131,700</u>

\*Մնացորդը կփոխանցվի Համաշխարհային Բանկ:

2023թ. ընթացքում հատուկ հաշիվներում որևէ շարժ չի եղել:

## 5 Համաշխարհային Բանկի ֆինանսավորում

*ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM*

ԱՄՆ դոլար	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջան	2023թ. ապրիլի 27-ի դրությամբ
ԾՄՀ ընթացակարգեր	137,441	137,115	19,715,795
Այլ ընթացակարգեր	31,068	67,865	23,813,361
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում)	162,602	(204,980)	110,124
Սկզբնավճար	-	-	112,500
	<u>331,111</u>	<u>-</u>	<u>43,751,780</u>

*ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM*

ԱՄՆ դոլար	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջան	2023թ. ապրիլի 27-ի դրությամբ
ԾՄՀ ընթացակարգեր	1,699,489	-	31,226,955
Այլ ընթացակարգեր	398,866	-	8,673,045
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում)	(2,098,355)	-	-
Սկզբնավճար	-	-	100,000
	<u>-</u>	<u>-</u>	<u>40,000,000</u>

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ  
Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր  
ՎՋՄԲ Վարկ 8229-AM  
ՎՋՄԲ Վարկ 8523-AM

## 6 Կառավարության համաֆինանսավորում

ՎՋՄԲ թիվ 8229-AM վարկային համաձայնագրով նախատեսված բոլոր ծախսերի համար գործում է 20% կառավարության համաֆինանսավորում: 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կառավարության համաֆինանսավորումը կազմել է 70,389 ԱՄՆ դոլար, իսկ վերադարձված գումարը՝ 36,234 ԱՄՆ դոլար (34,155 ԱՄՆ դոլար գուտ գումար): 2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջանի համար Կառավարությանը վերադարձված գումարը կազմում է 21,514 ԱՄՆ դոլար (2023թ. ապրիլի 27-ի դրությամբ՝ 10,852,674 ԱՄՆ դոլար):

ՎՋՄԲ թիվ 8523-AM վարկային համաձայնագրով նախատեսված բոլոր ծախսերի համար գործում է 20% կառավարության համաֆինանսավորում: Հաշվետու տարվա ընթացքում կառավարության համաֆինանսավորումը կազմել է զրո (2023թ. ապրիլի 27-ի դրությամբ՝ 9,950,446 ԱՄՆ դոլար):

## 7 Ֆոնդերի օգտագործում ըստ հոդվածների

Ինչպես նկարագրված է 8229-AM և 8523-AM վարկային համաձայնագրերում, Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին համախմբված հաշվետվությունում ծախսերը ներկայացված են երկու հոդվածով, որից մեկը միավորում է որոշ ենթահոդվածներ: Օգտագործողների հարմարության համար ֆոնդերի օգտագործման բացվածքը ներկայացված է ստորև.

*ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM*

ԱՄՆ դոլար	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջան	2023թ. ապրիլի 27-ի դրությամբ
Աշխատանքներ	-	-	47,923,866
Ապրանքներ	-	-	427,235
Խորհրդատվական ծառայություններ	259,749	-	5,247,224
Գործառնական ծախսեր և վերապատրաստում	-	-	867,478
Սկզբնավճար	-	-	112,500
	<u>259,749</u>	<u>-</u>	<u>54,578,303</u>

*ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM*

ԱՄՆ դոլար	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջան	2023թ. ապրիլի 27-ի դրությամբ
Աշխատանքներ	-	-	42,491,920
Ապրանքներ	-	-	731,671
Խորհրդատվական ծառայություններ	-	-	5,849,803
Գործառնական ծախսեր և վերապատրաստում	-	-	907,717
Սկզբնավճար	-	-	100,000
	-	-	50,081,111

**8 Շրջանառու կապիտալի զուտ աճ/(նվազում)**

ԱՄՆ դոլար	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջան	2023թ. ապրիլի 27-ի դրությամբ
Բանկային հաշիվներում աճ/(նվազում)	112,320	(21,576)	110,124
Կանխավճարների աճ	13,299	-	-
	125,619	(21,576)	110,124

## 9 Հիմնադրամի կողմից ստացված գումարների և ՀԲ-ի փոխհատուցումների համադրում

2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 27-ն ընկած ժամանակաշրջան

ԱՄՆ դոլար

ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8229-AM

Հոդված	Դիմում	Հիմնադրամ	ՀԲ	Տարբերություն
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Ծրագրի գործառնական ծախսեր	36-DA 37-DA 39-DA	87,397 81,111 204,980	87,397 81,111 204,980	- - -
		<u>373,488</u>	<u>373,488</u>	<u>-</u>
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում)	36-DA 38-DA 39-DA	(37,397) 200,000 (204,980)	(37,397) 200,000 (204,980)	- - -
		<u>(42,377)</u>	<u>(42,377)</u>	<u>-</u>
Ընդամենը		<u>331,111</u>	<u>331,111</u>	<u>-</u>

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ  
Կենսական եշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր  
ՎՋՄԲ Վարկ 8229-AM  
ՎՋՄԲ Վարկ 8523-AM

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

ԱՄՆ դոլար

ՎՋՄԲ վարկային համաձայնագիր թիվ 8523-AM

Հոդված	Դիմում	Հիմնադրամ	ՀԲ	Տարբերություն
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Ծրագրի գործառնական ծախսեր	38-DA	2,098,355	2,098,355	-
		<u>2,098,355</u>	<u>2,098,355</u>	-
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում)	38-DA	(2,098,355)	(2,098,355)	-
		<u>(2,098,355)</u>	<u>(2,098,355)</u>	-
Ընդամենը		<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ  
Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր  
ՎՋՄԲ Վարկ 8229-AM  
ՎՋՄԲ Վարկ 8523-AM